

1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՐԶՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. Մարզի համառոտ բնութագիրը

1.1 Ռելիեֆի, կլիմայի, բուսածածկույթի (անտառներ, տնկարաններ և այլն), հիդրոգրաֆիկ բնութագիրը

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Մարզկենտրոնը ք.Հրազդանն է, որի ընդհանուր տարածքը 2076 քկմ է: Մարզը սահմանակից է Երևան քաղաքին (սահմանի երկարությունը 40կմ), Արարատի մարզին (սահմանի երկարությունը 33կմ), Գեղարքունիքի մարզին (սահմանի երկարությունը 62կմ), Տաուշի մարզին (սահմանի երկարությունը 3կմ), Լոռու մարզին (սահմանի երկարությունը 31կմ), Արագածոտնի մարզին (սահմանի երկարությունը 82կմ): Մարզի սահմանի պարագիծը կազմում է 251 կմ, ձգվածությունը` 74 կմ:

Մարզի հյուսիսային սահմանն է ինտենսիվ ծալքավոր, հրաբխային ապարներից կազմված Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջը, արևելքում` Գեղամա հրաբխային վահանաձև լեռնազանգվածն է: Արևմուտքում բյուրեղաթերթաքարից ու տուֆաբրեկչիաներից կազմված Ծաղկունյաց լեռներն են ու Արայի հրաբխային լեռը: Հարավում Ողջաբերդի ծալքավոր լեռնաշղթան է, որտեղ գերակշռող ապարատեսակներն են տուֆաբրեկչիաները, տուֆաթերթաքարերը: Ռելիեֆ առաջացնող ժամանակակից արտածին պրոցեսներից է գետերի խորքային երոզիան և լեռկացումը, նաև ժամանակավոր ջրհոսների միջոցով կատարվող երոզիան և լանջերի սողքը:

Մարզի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ բարձրության և նրա բնակելի տարածքների համար արտահայտվում են հետևյալ տիպերով` չոր խիստ ցամաքային, բարեխառն, մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից` Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Մարզով են հոսում նաև Գետառն ու Ագատը, որոնք ունեն ռոզգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունի Ակնա լիճը /3032մ. բարձրություն/, որով ջրարբիացվում են ամառային արոտավայրերը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդներ, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները` համապատասխան բուսական և կենդանական աշխարհներով:

Մարզում առկա հողային ռեսուրսներ` 209303 հա, այդ թվում` վարելահողեր -37204 հա, պտղատու այգիներ -2502 հա, խաղողի այգիներ -893 հա, խոտհարքեր -10834 հա, արոտավայրեր -53935 հա, ռոզգելի հողատարածքներ -15275 հա:

Մարզի անտառային տարածքները կազմում են 22969 հա, որոնք պատկանում են ՀՀ Գյուղատնտեսության նախարարության <<Հայանտառ>>ՊՈԱԿ <<Հրազդանի անտառտնտեսություն>> մասնաճյուղին՝ 22564 հա և ՀՀ Բնապահպանության նախարարության <<Արգելոցապարկային համալիր>>ՊՈԱԿ-ին՝ 405հա:

Մարզում քամիների միջին արագությունն է 3,2մ/վ, ուղղությունը՝ հյուսիս-արևելյան, անդորրը՝ 10 օր ամռանը, 45 օր՝ ձմռանը:

1.2 Մարզի վարչական բաժանումը, բնակավայրերը, բնակչության թիվը՝ ըստ տարիքային խմբերի Մարզի տարածքում գտնվում են քաղաքային՝ թվով 7 և գյուղական՝ թվով 60 համայնքներ: Մարզի բնակչությունը կազմում է 277800 մարդ, որից՝ 141678 կին, 136122 տղամարդ: Բնակչության թվաքանակը ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան 3578 մարդ, 1-ից 9 տարեկան 27383 մարդ, 9-ից 17 տարեկան 43117 մարդ, 17 տարեկանից բարձր 203722 մարդ: Բնակչության խտությունը 1կմ² վրա կազմում է 133 մարդ:

1.3 Մարզի սոցիալ-տնտեսական բնութագիրը

Մարզում բնակելի տների քանակը կազմում է 27222, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 2456 միավոր: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 7%-ը: Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիտոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով / Հանքավան, Բջնի, Արզնի /: Երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարվում բազմամետաղային, ոսկու պղինձ - մոլիբդենի, բազալտի, լիտոիդային պեմզայի, պաշարների հաստատման և վերագնահատման ուղղությամբ: Զգալի են ջրային ռեսուրսների պաշարները /Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի քաղցրահամ ջրերի աղբյուրներ /, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

1.3.1 Տրանսպորտային հաղորդակցության ուղիներ (Ճանապարհներ, կամուրջներ, թունելներ, երկաթուղի, կապի և կոմունալ-էներգետիկ ցանցեր և այլն)

Մարզի տարածքով անցնում են Մ-4՝ Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման և Մ-15՝ Բալախովիտ-Մասիս միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Մարզի պետական սեփականություն հանդիսացող եվ համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 612.4 կմ, որից 347.6 կմ միջպետական և հանրապետական նշանակության է, 202.6 կմ մարզային, 62.2 կմ համայնքային նշանակության: Ըստ տարածաշրջանների մարզային ճանապարհային ցանցն ունի հետևյալ պատկերը. Հրազդանի տարածաշրջանում՝ 51.9 կմ, Աբովյանի տարածաշրջանում՝ 124.3 կմ, Նաիրիի տարածաշրջանում՝ 28.4 կմ: Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան երկաթգիծը, որի վրա են գտնվում Հրազդանի, Չարենցավանի, Աբովյանի կայարանները:

Մարզի տարածքում առկա են Հ-28 Ջրառատ-Հանքավան ավտոճանապարհի 11,70-րդ կմ վրա գտնվող, Հ-28 Ջրառատ-Հանքավան ավտոճանապարհի 15,85-րդ կմ վրա գտնվող, Հ-28 Ջրառատ-Հանքավան ավտոճանապարհի 2-րդ կմ վրա գտնվող, Հ-27 Հ-28-Մեղրաձոր-Մարգահովիտ ավտոճանապարհի 1,0-րդ կմ վրա գտնվող, Հ-6 Աբովյան-Աշտարակ ավտոճանապարհի 3,15-րդ կմ վրա գտնվող, Հ-5 Նոր Գեղի-Հրազդան ավտոճանապարհի 11,95-րդ կմ վրա գտնվող և Իջևանի կայարան մասնաճյուղի Հայաստանի Հանրապետության պետական սահման Իջևան-Հրազդան երկաթուղագծի վրա գտնվող կամուրջները:

Մարզի տարածքում գծային հեռախոսակապի ծառայությունները մատուցվում են <<Արմենթել>>ՓԲԸ –ի տարածքին բիզնես միավորների կողմից: Բջջային կապը մարզի տարածքում իրականացնում են 3 օպերատորների միջոցով եվ մարզի ամբողջ տարածքը

ընդգրկված է բջջային կապի ծածկույթում: Փոստային ծառայություններն իրականացվում են <<Հայփոստ>>ՓԲԸ –ի միջոցով:

Մարզի արտադրանքի ծավալի մեջ զգալի կշիռ ունի էլեկտրաէներգիայի արտադրությունը: Այս բնագավառի 2 խոշոր ընկերությունների՝ <<Հրազդանի ՋԷԿ>> - <<Ինտեռ ՌՍՕ ԵԷՍ>> ՓԲԸ և <<Սևան - Հրազդան ՀԷԿ - երի կասկադ>> ՓԲԸ ընդհանուր հզորությունը կազմում է 1300 ՄՎՏ, որոնք ապահովում են հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին: Մարզի տարածքում գտնվում են «Կաթնաղբյուր-Երևան» ջրանցքի, «Կոտայքի Ջրանցքի», «Նարեկ», «Գառնի», «Գառնի-1» և «Թեժ» փոքր հիդրոէլեկտրակայանները: Մարզում_առկա էլեկտրահաղորդման վերգետնյա 110-35կՎտ ցանցի երկարությունը 333,66 կմ է, 6-10 կՎտ՝ 578,38 կմ , 0,4 կՎտ՝ 703,65 կմ: Ստորգետնյա ցանցինը՝ 6-10 կՎտ՝ 143,26 կմ , 0,4 կՎտ՝ 129,35կմ :

Մարզի տարածքով անցնում է Ղազախ-Երևան մայրուղային գազատարը, մարզի տարածքում գտնվում է գազի պահեստներ: Գազամատակարարման ցածր ճնշման գծերի երկարությունը 462200 մ, միջին ճնշման գծերինը՝ 318950 մ:

Մարզի Աբովյան, Հրազդան, Չարենցավան, Նոր Հաճն, Եղվարդ, Ծաղկաձոր, Բյուրեղավան քաղաքների և 18 գյուղերի ջրամատակարարման իրականացվում է հետևյալ կապտածներից՝ <<Մաքրավան 1,2,3>> կապտածը գտնվում է Հրազդան քաղաքի տարածքում, ունի 1650լ/վրկ հզորություն և սնում է ք. Աբովյանը, ք. Ծաղկաձորը, ք. Հրազդանը, գ. Կոտայքը, գ. Բջնին, գ. Քաղսին և գ. Ջրառատը: Մայրուղու երկարությունը կազմում է 116.7 կմ, խողովակաշարի տրամագիծը՝ 100-700մմ, իրականացվում է պոմպակայանների միջոցով: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման 8 ջրամբար, որոնցից երեքը՝ 2000 մ³, 2-ը՝ 750 մ³ և համապատասխանաբար մեկական՝ 3000 մ³, 2200 մ³, 1150 մ³, 250 մ³ և երկուսը՝ 150 մ³ տարողությամբ: Փոխարինող ջրաղբյուրներ կարող են հանդիսանալ <<Գյումուշ>>, <<Թեղենիս>>, <<Խորքային հորեր>> ջրաղբյուրները: <<Նուռնուս>> աղբյուրը գտնվում է Նուռնուս գյուղի մոտ, ունի 25լ/վրկ հզորություն և սնում է ք. Բյուրեղավանը և գ. Արզնին, մայրուղու երկարությունը կազմում է 14.9կմ, խողովակաշարի տրամագիծը 25-300մմ, իրականացվում է ինքնահոս: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման 2 ջրամբար՝ 1000մ³ և 500 մ³ տարողությամբ: Փոխարինող ջրաղբյուր կարող է հանդիսանալ <<Գյումուշ>> ջրաղբյուրը: <<Ուլաշիկ>> ջրաղբյուրը գտնվում է Հանքավանից հյուսիս, ունի 65լ/վրկ հզորություն և սնում է գ. Արտավազը և գ. Փյունիկը, ջրատարի երկարությունը կազմում է 7.5կմ, տրամագիծը՝ 150մմ, իրականացվում է ինքնահոս կերպով: Փոխարինող ջրաղբյուր կարող է հանդիսանալ տեղական աղբյուրը: <<Յոթ աղբյուր>> աղբյուրը գտնվում է Աժդահա լեռան վրա, որն ունի 100լ/վրկ հզորություն և սնում է Ողջաբերդ և Գեղադիր գյուղերը: Մայրուղու երկարությունը կազմում է 32կմ, խողովակաշարի տրամագիծը 100մմ, իրականացվում է ինքնահոս կերպով, առանց պոմպակայանների: Մայրուղու վրա գործում է օրվա կարգավորման 1 ջրամբար՝ 150 մ³ : Փոխարինող ջրաղբյուր կարող է հանդիսանալ տեղական աղբյուրը: <<Սոլակ>> ջրաղբյուրը գտնվում է գ. Սոլակի տարածքում, որն ունի 180-200լ/վրկ հզորություն և սնում է ք. Չարենցավանը և գ. Սոլակը: Ջրատարի երկարությունը կազմում է 14կմ, խողովակաշարի տրամագիծը՝ 125-150 մմ, իրականացվում է պոմպակայանի միջոցով: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման երկու ջրամբար, որից մեկը՝ 150 մ³ տարողությամբ, իսկ մյուսը՝ 600 մ³ : <<Ալափարս>> աղբյուրը գտնվում է գ. Ալափարսի տարածքում, ունի 90լ/վրկ հզորություն և սնում է ք. Չարենցավանը և գ. Ալափարսը: Մայրուղու երկարությունը կազմում է 8կմ, խողովակաշարի տրամագիծը 300մմ, իրականացվում է պոմպակայանների միջոցով: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման երկու ջրամբար, որից մեկը 150 մ³ տարողությամբ, իսկ մյուսը՝ 600 մ³: <<Գյումուշ 1,2,3>> աղբյուրը գտնվում է գ. Կարենիսի տարածքում, որն ունի 350լ/վրկ հզորություն: Այս ջրաղբյուրից սնվում են Չարենցավան և Աբովյան քաղաքները, Արզել, Ջորավան, Կարենիս գյուղերը: Մայրուղու ջրատարի երկարությունը 47,2կմ է, տրամագծերը՝ 100-500մմ: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման հինգ ջրամբար, որից մեկը՝ 2000 մ³ , երկուսը՝ 250 մ³ , մեկը՝ 500 մ³ և մեկը՝ 150 մ³ տարողություն: <<Թեղենիս>> աղբյուրը գտնվում է Թեղենիս լեռան մոտ, ունի 14լ/վրկ հզորություն և սնում է Ծաղկաձոր քաղաքը: Մայրուղու երկարությունը կազմում է 8.9կմ, խողովակաշարի տրամագիծը՝ 100-150մմ, սնուցումը

իրականացվում է ինքնահոս կերպով: Մայրուղու մոտ գործում է օրվա կարգավորման 4 ջրամբար՝ 2000 մ³ տարողությամբ: Փոխարինող ջրաղբյուր կարող է հանդիսանալ «Մաքրավան» ջրաղբյուրը: «Արզական» աղբյուրը գտնվում է գ. Արզականում, սնում է Եղվարդ քաղաքը և Նոր Արտամես, Մրգաշեն, Նոր Գեղի գյուղերը: Մայրուղու երկարությունը կազմում է 25.5 կմ, խողովակաշարի տրամագիծը 100-300մմ, սնուցումը իրականացվում է պոմպակայանների միջոցով: Մայրուղու վրա գործում են օրվա կարգավորման 1 ջրամբար՝ 500 մ³ տարողությամբ: Փոխարինող ջրաղբյուր կարող է հանդիսանալ Ապարան- Սևան ջրատարը: Մարզի ջրամատակարարման համակարգերի ընդհանուր հզորությունը կազմում է 2494լ/վրկ:

1.3.2 Քիմիական, ճառագայթային, կենսաբանական (մանրէաբանական) վտանգավոր օբյեկտներ

Մարզում գործում են ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող «Թամարա» ՍՊԸ, «Կոտայք» գարեջրի գործարան ՍՊԸ, Հրազդանի «Լազուր» ՊՈԱԿ կազմակերպությունները:

1.3.3 Վտանգավոր հիդրոտեխնիկական կառույցներ

Մարզում առկա է չորս ջրամբարներ՝ Ախպարայի, Մարմարիկի, Գեղարդալճի և Սևաբերդի:

1.3.4 Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ

Մարզում հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ են թվով 17 բենզալցակայանները և թվով 21 ավտոմեքենաների գազալիցքավորման ճնշումային կայանները:

1.3.5 Հանրակրթական հաստատություններ ու հասարակական նշանակության կառույցներ

Մարզում գործում են թվով 101 հանրակրթական դպրոցներ, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ /օժանդակ/ դպրոց, 54 մանկապարտեզներ, 25 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 10 միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, 6 թանգարաններ և պատկերասրահներ:

1.3.6 Բժշկական և այլ առողջապահական հիմնարկներ

Մարզում գործում են 5 ստացիոնար և 35 ամբուլատոր- պոլիկլինիկական հիմնարկներ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 250 հատ: Մարզի բուժհիմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 600 մահճակալ: Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 420, միջին բուժանձնակազմինը՝ 870, կրտսեր բուժանձնակազմինը՝ 207:

1.3.7 Պահեստներ (իրային, սննդամթերային, կենցաղային և այլ նյութական արժեքների)

Մարզում գործում է ԱԻՆ պետական ռեզերվների գործակալության «ԼԱԶՈՒԲ» ՊՈԱԿ-ը:

1.3.8 Պատմամշակութային օբյեկտներ

Մարզում գրանցված են 2024 պատմամշակութային արժեքներ եւ հուշարձաններ / Գառնիի տաճար, Գեղարդ, Կեչառիս /: Բազիլիկ եւ ուշ շրջանի քրիստոնեական գեղեցիկ տաճարներ կան Ողջաբերդում, Եղվարդում, Արամուսում, Պտղնիում, Ծաղկաձորում, Բջնիում եւ Մեղրաձորում:

2. Հնարավոր իրադրությունը

2.1 Քիմիական, ճառագայթային, կենսաբանական հնարավոր իրավիճակը

2.1.1 Հնարավոր քիմիական վարակման գոտիները

Տեխնոլոգիական վթարներից կարող են խախտվել ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող օբյեկտների սառնարանային տնտեսությունների սարքավորումների հերմետիկությունը և ամոնյակն ամբողջությամբ կարող է դուրս գալ արտադրական տարածք, իսկ այնուհետև մթնոլորտ: : Ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտահոսքի հետևանքով <<Թամարա>> ՄՊԸ-ի շրջակայքում կվարակվի 6 կմ² հողատարածք, 2320 մարդ, 650 խոշոր և մանր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիներ, <<Կոտայք>> գարեջրի գործարան ՄՊԸ-ի շրջակայքում՝ 7 կմ² հողատարածք, 1750 մարդ, 700 խոշոր և մանր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիներ, Հրազդանի <<Լազուր>> կոմբինատի շրջակայքում՝ 5 կմ² հողատարածք, 6000 մարդ:

2.1.2. Հնարավոր անասնահամաճարակները և ռիսկի գոտում գտնվող բնակավայրերը

Մարզի տարածքում հնարավոր է համաճարակի բռնկում: Հատկապես ամռան ամիսներին ջրի և սննդամթերքի հակասանիտարական վիճակից կարող են առաջանալ մարդկանց և գյուղ կենդանիների թունավորումներ բնակավայրերի մեծ մասում: Մարզի տարածքը հանդիսանում է գյուղ կենդանիների տեղափոխման տարանցիկ գոտի, որի ժամանակ հնարավոր է անասնահամաճարակի բռնկում:

2.2. Ուժեղ երկրաշարժի դեպքում ստեղծված հնարավոր իրավիճակը

Կոտայքի մարզի տարածքը բնորոշվում է բարդ սեյսմատեկտոնական կառուցվածքով:

1) երկրաշարժի առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ $\lambda = 44^{\circ} 80'$, $\varphi = 40^{\circ} 10'$, $M=7.0$, $H=15$ կմ (10-11 բալ),

բ. Ջանգեզուր՝ $\lambda = 46^{\circ} 00'$, $\varphi = 39^{\circ} 20'$, $M=6.3$, $H=22$ կմ (8-9 բալ),

գ. Սպիտակ՝ $\lambda = 44^{\circ} 23'$, $\varphi = 40^{\circ} 92'$, $M=7.1$, $H=15$ կմ (9-10 բալ),

դ. Փարաքար՝ $\lambda = 44^{\circ} 43'$, $\varphi = 40^{\circ} 13'$, $M=5.0$, $H=10$ կմ (7 բալ)։

2) հնարավոր էպիկենտրոններից առավել մեծ վնաս կհասցվի Գառնիի երկրաշարժի դեպքում (10-11 բալ) : Նշված օջախի նկատմամբ բնակավայրերի հեռավորությունից կախված՝ նրանց տարածքները կենթարկվեն տարբեր ուժգնության ցնցումների։

3) առավել ծանր իրավիճակ կստեղծվի Աբովյանի տարածաշրջանում: Հնարավոր ուժեղ երկրաշարժի հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախներ, կարող են վթարվել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները, որի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում, ինչպես նաև ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող օբյեկտների վթարները։

4) երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կստեղծեն լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիները։

5) հատկապես բարդ իրադրություն կստեղծվի Գեղարդի, Գողթի, Հատիսի, Ջովաշենի, Ջառի, Ջովքի, Կամարիսի, Կապուտանի, Կաթնաղբյուրի, Արամուսի, Կոտայքի, Նոր գյուղի, Գեղաշենի, Չորաղբյուրի, Մայակովսկու, Ջրաբերի, Ողջաբերդի, Գեղաղիի, Գառնիի, Սևաբերդի, Ֆանտանի,

Ակունքի գյուղական համայնքներում և Աբովյան քաղաքում, որտեղ Երկրի մակերեսին առաջացած ճեղքերի լայնությունը կհասնի մինչև մեկ մետրի: Կավերվի նույնիսկ լավ կառուցված փայտե և քարե տների մեծ մասը, կձևախախտվեն երկաթգծի ռելսերը

6) 10 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 21 բնակավայրեր, 25713 բնակելի տներ: Բնակչության շրջանում կորուստները կկազմեն՝ անվերադարձ – 9334 մարդ, սանիտարական – 6915 մարդ, որից ծանր վիրավորներ – 3484 մարդ, միջին ծանրության վիրավորներ – 1869 մարդ, թեթև վիրավորներ – 1562 մարդ.

7) 9 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 41 համայնքների 38447 բնակելի տներ: Բնակչության շրջանում կորուստները կկազմեն՝ անվերադարձ – 13953 մարդ, սանիտարական – 10348 մարդ, որից ծանր վիրավորներ – 5214 մարդ, միջին ծանրության վիրավորներ – 2797 մարդ, թեթև վիրավորներ – 2337 մարդ.

8) 8 բալ ուժգնությամբ սեյսմավտանգ գոտում կհայտնվեն մարզի թվով 7 բնակավայրեր, 15740 բնակելի տներ: Բնակչության շրջանում կորուստները կկազմեն՝ անվերադարձ – 5713 մարդ, սանիտարական – 4232 մարդ, ծանր վիրավորներ – 2132 մարդ, միջին ծանրության վիրավորներ – 1143 մարդ, թեթև վիրավորներ – 957 մարդ

9) երկրաշարժի հետևանքով մարզում կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված բնակարաններ՝ 79900, որոնցից 1-ին կարգ՝ 715, 2-րդ կարգ՝ 6507, 3-րդ կարգ՝ 6654, 4-րդ կարգ՝ 24179, 5-րդ կարգ՝ 41845,

10) փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 5053 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 35346 մարդուց բաղկացած անձնակազմով, 302 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 6963 մարդուց բաղկացած անձնակազմով, 127 սանիտարական խմբեր՝ 459 մարդուց բաղկացած անձնակազմով, 25 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 200 վթարավերականգնողական խմբեր, 404 հասարակական կարգի պահպանման ջոկեր.

11) մարզում անհրաժեշտ կլինի ընդհանուր թվով 1014 միավոր ինժեներական տեխնիկա, որից մղան -338, էքսկավատոր - 338, ավտոկռունկ – 338, մարզում ինքնաթափեր -654, կոմպրեսորային կայաններ – 302, էլեկտրակայաններ -353 :

2.3. Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներում խոշոր հրդեհի կամ պայթյունի հետևանքով ստեղծված իրավիճակը

Մարզում հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարների ժամանակ հնարավոր է ստեղծվի բարդ հրդեհային և պայթյունավտանգ իրավիճակ

2.4. Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում հայտնվող բնակավայրերը

Աղբյուրակի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել Քաղսի, Սոլակ, Բջնի, Արզական, Քարաշամբ, Կարենիս, Նուռնուս, ՆորԳեղի, Արզնի, Գետամեջ համայնքների հողատարածքները՝ 636 հա, Քաղսի, Բջնի, Արզական համայնքների բնակելի տարածքներով անցնող Հրազդան գետի հունի աջ և ձախ ավերում գտնվող տները և մասնակի տարահանման է ենթակա 520 մարդ, 196 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ, որոնք տարահանվում են նույն բնակավայրի անվտանգ տարածքներ՝ հետիոտն՝ համաձայն տարահանման պլանի: Սևաբերդի պատվարի փլուզման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել ՝ Ջառ, Կաթնաղբյուր, Ակունք համայնքների բնակելի տարածքների որոշակի մասը: Մասնակի տարահանման է ենթարկվում 1120 մարդ, 845 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ, որոնք տարահանվում են նույն բնակավայրերի անվտանգ տարածքներ՝ հետիոտն համաձայն տարահանման պլանի: Գեղարդալճի պատվարի փլուզման դեպքում բնակելի տարածքներ մշակովի հողատարածքներ ջրածածկման գոտում չեն գտնվում:

2.5. Սելավավտանգ տարածքներ

Սելավային երևույթները Կոտայքի մարզում հիմնականում ձևավորվում են Հրազդանի աջակողմյան վտակ Մարմարիկի ավազանում Փամբակի լեռնաշղթայի հարավահայաց լանջերին և Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերից սկզբնավորվող Ակունք գետի ավազանում, որը ներկայումս առանձնացված է իր սելավաբեր վտակներ Գետառից, Ջրվեժից, Ողջաբերդից և Գետամեջ գյուղի մոտ թափվում է Հրազդան գետը: Մարմարիկի ավազանում ջրաքարային սելավները ձևավորվում են 3-5 տարվա հաճախականությամբ, իսկ մարզի մնացած մասերում 10-15 տարվա հաճախականությամբ:

2.6. Սողանքների տեսանկյունից վտանգավոր տարածքներ

Մարզի անբարենպաստ հիդրոլոգիական պայմանները, ռելիեֆի կտրտվածությունը, նստվածքային ապարների, լանջերում բեկվածքների առկայությունը և մարդու գործունեության բացասական ազդեցությունը Ողջաբերդի տարածքում առաջացրել են ակտիվ սողանքային գոտի:

2.7. Քարաթափումների, փլուզումների, նստվածքային երևույթների օջախներ

Մարզի Բջնի, Գառնի, Հանքավան, Արզնի համայնքներում առկա է փլուզման և քարաթափման վտանգավոր տարածքներ:

2.8. Անտառային հրդեհների տեսանկյունից վտանգավոր տարածքներ

Մարզի անտառային տարածքները կազմում են 22969 հա, որոնք պատկանում են ՀՀ Գյուղատնտեսության նախարարության <<Հայանտառ>> ՊՈԱԿ <<Հրազդանի անտառտնտեսություն>> մասնաճյուղին՝ 22564 հա և ՀՀ Բնապահպանության նախարարության <<Արզելոցապարկայինհամալիր>> ՊՈԱԿ-ին՝ 405 հա: Անտառային հրդեհների համար բարենպաստ տարածքներ են՝ հիմնականում մարզի հանգստյան գոտիները, ինչպես նաև բնակավայրերին մոտ գտնվող անտառաշերտերը Անտառային հրդեհների բարենպաստ տարածքներ են Հրազդանի, Ծաղկաձորի, Մարմարիկի, Աղավնաձորի, Քաղսիի, Հանքավանի, Արտավազի, Մեղրաձորի, Արզականի, Բջնիի, Թեղենիքի, Բուժականի, Արզնիի, Նուռնուսի, Գետամեջի, Կապուտանի, Հացավանի, Ձորաղբյուրի, Գեղարդի անտառաշերտերը:

3. Եզրակացություններ հնարավոր իրադրության գնահատումից

1/Փոթորիկները, մրրիկները, խոշոր կարկուտը, ուժեղ անձրևը, ուժեղ ձնատեղումը, ուժեղ սառնամանիքը, երաշտը, խորշակը , ցրտահարությունը և մյուս ԱԻ դեպքերը Մարզում բնական պայմանների բացառիկ բազմազանությունը և աշխարհագրական դիրքը նպաստում են վերը նշված վտանգավոր երևույթների առաջացումը, որոնց հետևանքով տուժում են բնակավայրերի ցանքատարածությունները, խոտհարքները, բանջարա-բոստանային կուլտուրաները, բնակելի ֆոնդը, գյուղ կենդանիները:

2/ մարզում խոշոր արտադրական վթարների, աղետների սպառնալիք կարող են հանդիսանալ վթարներ ՈՒՆԹՆ-ներով աշխատող օբյեկտներում, վթարներ վտանգավոր նյութեր տեղափոխող տրանսպորտային միջոցներում, երկաթգծի տրանսպորտային վթարներ, հրդեհներ անտառային տարածքներում, մարզի տարածքով անցնող գազի և ջրի գլխավոր խողովակաշարերի վթարներ, հեղեղումներ և սելավներ մարզի առանձին տարածաշրջաններում, ջրամբարների պատվարների փլուզումներ, համաճարակներ /գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց/, բույսերի կարանտին հիվանդությունների տարածման դեպքում:

3/Ներկայացնելով մարզի բնակլիմայական բազմաբնույթ պայմանները հանգում ենք այն եզրակացության, որ մարզում հնարավոր են գրեթե բոլոր բնական աղետները

II. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

4. Կառավարման կազմակերպում

4.1 Կառավարման մարմինները

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը ղեկավարում է Մարզի բնակչության պաշտպանության ողջ գործընթացը և հանդիսանում է մարզային ԱԻ հանձնաժողովի նախագահը :

Բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ: Բնակչության պաշտպանության համակարգի միջոցառումների ընդհանուր ղեկավարումը մարզային նշանակության ԱԻ-ների ժամանակ իրականացնում է մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի նախագահն իր ղեկավարման աշխատանքային մարմնի՝ մարզային փրկարարական վարչության ու ԱԻ հանձնաժողովի միջոցով, իսկ համայնքային և տեղական նշանակության ԱԻ-ների դեպքում, տվյալ համայնքների և օբյեկտների ԱԻ հանձնաժողովի նախագահները՝ իրենց հանձնաժողովների միջոցով: Մարզի բնակչության պաշտպանության համակարգի ղեկավար կազմի, տարահանման հանձնաժողովի, կազմակերպությունների ղեկավարները Մարզի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին զեկույցները ներկայացնում են երկու ժամը մեկ, անհրաժեշտության դեպքում՝ անմիջապես կապի միջոցներով, իսկ միջոցառումների ավարտից հետո՝ գրավոր:

Մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավարները կառավարում են իրենց ոլորտի բնակչության պաշտպանության գործընթացը և իրենց իրավասության սահմաններում՝

1) պատասխանատվություն են կրում բնակչության պաշտպանության պատրաստականության համար.

2) կազմակերպում և ղեկավարում են բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը.

3) հաստատում և գործողության մեջ են դնում բնակչության պաշտպանության պլանները.

4) արձակում են բնակչության պաշտպանությանը վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

5) վերահսկում են բնակչության պաշտպանության միջոցառումների կատարումը.

6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4.2 Կառավարման կետերը (շարժական, պահեստային և այլն)

Բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարումը իրականացվում է հիմնական, պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի պահեստային կառավարման կետում աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվում են օպերատիվ խմբեր:

4.3 Կապի և ազդարարման համակարգը

Արտակարգ իրավիճակների սպառնալիքի և առաջացման մասին մարզի ղեկավար կազմի ազդարարումը կատարվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետի միջոցով, համաձայն ՀՀ կառավարության 16.10.2003թ. թիվ 1304-Ն որոշման՝ «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին»:

ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության դիսպետչերը ազդանշանը ստանալուն պես կատարվածի մասին զեկույցում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին, մարզային փրկարարական վարչության պետին և ՀՀ ԱԻՆ ՓԾ ՀՈԻՂ -ին:

Մարզային փրկարարական վարչության անձնակազմի ազդարարումը դիսպետչերը իրականացնում է հեռախոսակապով, անհրաժեշտության դեպքում սուրհանդակների միջոցով:

ԱԻ-ում ազդարարման համակարգի հիմքն է հանդիսանում կենտրոնացված ազդարարման ավտոմատ համակարգերը, կապի ցանցերը, ռադիո և հեռուստահաղորդման ազդարարման հատուկ միջոցները՝ էլեկտրաշակներ, փողոցային բարձրախոսներ, ավանդական միջոցներ:

Էլեկտրասնուցման և հեռախոսակապի բացակայության դեպքում բնակչության ազդարարումը իրականացվում է ՀՀ Ոստիկանության շարժական բարձրախոսների միջոցով:

Ազդարարման ավարտի մասին դիսպետչերը զեկուցում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԿ, ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին, իսկ նա իր հերթին՝ մարզպետին:

ԱԻ առաջացման և դրանց հետևանքների վերացման ընթացքում տեղեկատվության հաղորդման տեխնիկական ապահովումը իրականացնում է ՀՀ տարածքում հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերությունների միջոցով:

ԱԻ առաջացման և դրանց հետևանքների վերացման ընթացքում տեղեկատվության հաղորդման համար պետական կառավարման տարածքային մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարները կարող են օգտագործել կապի առկա բոլոր հնարավոր ձևերն ու միջոցները:

Կապը ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության, մարզի ԱԻ հանձնաժողովի, տարահանման հանձնաժողովի, արձագանքող ուժերի, ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի, ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԿ-ի և հարևան մարզերի կառավարման կետերի հետ կազմակերպվում է քաղաքային, միջքաղաքային, բջջային հեռախոսակապով և ռադիոկապով:

5. Հետախուզության կազմակերպում և իրականացում

Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

Հետախուզական ուժերը գտնվում են մշտական պատրաստականության վիճակում:

Հետախուզության առարկա են հանդիսանում՝ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական տարածքները, բնակչության կենսաապահովումն ապահովող կազմակերպությունները, լրիվ և ուժեղ ավերածությունների ու աղետալի ջրածածկման գոտում հայտնված համայնքները, հրդեհների օջախները. բնակչության տարահանման և ուժերի առաջացման երթուղիները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները, պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները, շրջակա միջավայրի կազմակերպությունները:

Բնակչության պաշտպանության համակարգի ուժերի տեղակայման վայրերում և դեպի վտանգավոր օջախներ մուտքի երթուղիներում իրադրության ճշգրտումը, հիդրոտեխնիկական կառույցների փլվածքների բնույթի և աղետալի ջրածածկման գոտիների որոշումը, ինժեներական կառույցների հետախուզություն, վտանգավոր օբյեկտների փլվածքների բնույթի, պաշտպանական կառույցների տեղերի, մոտեցման ուղիների ճշգրտման, դրանցում առկա մարդկանց վիճակի և օգնության ցուցաբերման ձևերի որոշումը, կոմունալ ցանցի և գազամատակարարման գծերի վիճակի ճշգրտումը իրականացնում են մարզային ինժեներական և կոմունալ-տեխնիկական հետախուզական խմբերը:

Կապի գծերի վիճակի ճշգրտումն իրականացնում են ՀՀ տարածքում հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերությունների հետախուզական խմբերը:

Ավտոմայրուղիների վիճակի ճշգրտումը իրականացնում են մարզային բնակչության պաշտպանության համակարգի մարզային տրանսպորտային երթուղիների անցողունակության ապահովման խմբերը:

Էներգետիկ ցանցի վիճակի ճշգրտումն իրականացնում են Հայաստանի էլեկտրական ցանցեր <<Գեդամա>> մասնաձյուղի հետախուզական խմբերը:

Հրդեհների տարածքների հայտնաբերում և հրդեհների տարածման ուղղությունների որոշման աշխատանքները կատարում են ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչություն հրշեջ-փրկարարական ջոկատները:

Հետախուզական ուժերի և միջոցների բաշխումը ըստ գոտիների և փրկարարական աշխատանքների տեղամասերի կատարվում է իրավիճակից ելնելով: Հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են ըստ խնդիրների, ուղղությունների, կազմակերպությունների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի:

Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

Տարերային աղետների շրջաններում հետախուզությունը որոշում է աղետի օջախի (շրջանի) փակ սահմանները և նրա տարածման ուղղությունները, այն կազմակերպությունները ու բնակավայրերը, որոնց անմիջական վտանգ են սպառնում, մարդաշատ վայրերը տեխնիկական աշխատատեղերը հասցնելու ճանապարհները, վնասված շենքերի և կառույցների վիճակը, 1 -ին օգնության հայցող տուժածների առկայությունը դրանցում, վթարների տեղերը տեխնոլոգիական գծերում և կոմունալ - էներգետիկ ցանցերում, դիտահորերի և անջատման սարքերի վիճակը, դրանց ավերվածության կիրառման հնարավորությունները: Արտադրական վթարների դեպքում, հետախուզությունը պարզում է ավերվածությունների ծավալն ու աստիճանը, առանց անհատական պաշտպանության միջոցների աշխատանքները կատարելու հնարավորությունը, այն ավերվածությունների առկայությունը, որոնք կարող են ավելի մեծ չափերի հասցնել վթարները, վտանգի աստիճանը, արտադրական և կոմունալ-էներգետիկ ցանցերի վիճակը:

Հետախուզությունը կատարում են հետախուզական խմբերը (օղակները), որոնց թիվը կախված է տարերային աղետի ենթարկված շրջանի չափից կամ վթարի մասշտաբից, որտեղ տեղի է ունեցել վթարը:

Հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է Մարդպետը, ՄՓՎ կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա: Հետախուզության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Մարզպետը:

5.1 Ընդհանուր հետախուզություն

Ընդհանուր հետախուզությունն անմիջապես կազմակերպում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը:

2) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերի ու միջոցների վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում է Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետը:

3) մարզի տարածքում հետախուզության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը:

4) ընդհանուր հետախուզությունը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը,

Հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

բ. մարզի տարածքային հետախուզական ուժերը,
գ. մարզի կազմակերպությունների ընդհանուր և հատուկ հետախուզության ուժերը,
դ. մարզի ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները.

Մարզային մակարդակում ներգրավվում են՝

ա. պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության փորձագիտական կենտրոնի լաբորատորիան,

բ. անասնաբուժական սպասարկման մարզային համապատասխան ստորաբաժանումները,

գ. մարզային հիդրոոդերևութաբանական ծառայությունը,

դ. հայէկոմոնիթորինգի լաբորատորիան,

ե. բույսերի կարանտինի և պաշտպանության մարզային համապատասխան ստորաբաժանումը:

5.2 Հատուկ հետախուզություն

Հատուկ հետախուզությունը իրականացվում է ճառագայթային, քիմիական և մանրէաբանական մշտական հսկողության համակարգում ընդգրկված կազմակերպությունների ու բնակչության պաշտպանության համակարգի համապատասխան ծառայությունների ուժերով: Ծառայությունների պետերը կազմակերպում են հատուկ հետախուզություն՝ համապատասխան բնակչության պաշտպանության համակարգի ընդհանուր խնդիրներից ելնելով, ինչպես նաև իրենց ծառայության շահերի համար:

Հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն ըստ գործառույթների իրականացնում են մարզի համապատասխան կազմակերպությունների ղեկավարները:

6 Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը

Ուժերի պատրաստականության բերումը, ուժերի խմբավորումների ստեղծումը, դեպի փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման տեղամասեր երթի կազմակերպումը

Արտակարգ իրավիճակից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

Խափանված կառավարման համակարգի վերականգնման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման ներգրավվում են ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ փրկարարական ջոկատը, հրշեջ փրկարարական ջոկատները, բնակչության պաշտպանության համակարգի ծառայությունների, համայնքների, կազմակերպությունների ուժերը:

Վթարված օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով մարզի ԱԻ –ում գործող մշտական հանձնաժողովի նախագահի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, անընդհատությունը ապահովելու, հանկարծակի առաջացած լրացուցիչ խնդիրների լուծման համար ստեղծվում է ուժերի խմբավորում՝ երկու շարասյուներից և պահուստից:

Ուժերի խմբավորման առաջին շարասյունում ընդգրկվում են մարզի ուժերի և միջոցների 50 %, երկրորդ շարասյունում 30 %, մնացածը՝ պահուստ:

Ուժերի խմբավորման առաջին շարասյունում ընգրկվում են՝

ա)մարզի մշտական պատրաստականության ուժերը (բացառությամբ այդ ուժերի նվազագույն քանակի, որն անհրաժեշտ է ամենօրյա իրենց խնդիրներ լուծելու համար), բ)մարզային պաշտպանության տրանսպորտային ծառայության ճանապարհների անցանելիությունը ապահովող խմբերը, գ)մարզի բժշկական ծառայության ուժերը,դ)մարզի հասարակական կարգի պահպանման ծառայության ուժերը, ե)հնարավոր խոցման օջախներում հայտնված համայնքների, կազմակերպությունների ուժերը:

Ուժերի խմբավորման երկրորդ շարայությունում ընդգրկվում են՝ մարզային ծառայությունների և հնարավոր խոցման օջախներից դուրս մնացած համայնքների ուժերը:

Ուժերի խմբավորման պահուստում ընդգրկվում են՝

ա)փրկարարական վաշտը, բ)երկրորդ շարայությունում չընդգրկված ուժերը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումները (համաձայն փոխգործողության պլանի):

Ուժերի խմբավորման մեջ ընդգրկված ուժերը գտնվում են հիմնական տեղակայման վայրերում, ապահովելով իրենց պաշտպանվածությունը:

Առաջին շարայան պատրաստվածության ժամկետը մինչև «Ժ»+6 ժամ, երկրորդ շարայան պատրաստվածության ժամկետը «Ժ»+6 ժամից մինչև «Ժ»+12 ժամ, և պահուստը՝ «Ժ»+12 ժամ և ավելի:

Փրկարարական աշխատանքները ներառում են՝

ա)աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն,բ)հրդեհների մեկուսացում և մարում,գ)տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից,դ)թաքստոցների և ապաստարանների մուտքերի մաքրում, ե)տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում,զ)վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում:

Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

ա)ճանապարհների և կամուրջների մաքրում (վերականգնում), բ)կոմունալ-էներգետիկ և կապի ցանցերում վթարների վերացում ու գործունեության վերականգնում,գ)փլուզմամբ սպառնացող կոնստրուկցիաների (շինությունների) ամրացում կամ փլեցում,դ)թաքստոցների և ապաստարանների վերականգնում, ե)պաշտպանության, տնտեսության համար ռազմական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների գործունեության վերականգնում,զ)փլուզումներում երթուղիների ստեղծում, ե)հասարակական կարգի ապահովում:

Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

Կազմակերպություններում, խոշոր փլվածքների առկայության դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացմանը և պաշտպանական կառույցների մուտքերի մաքրման աշխատանքներին ներգրավվում են մեխանիզացված և ինժեներական ուժերը:

Երթուղային ճանապարհների մաքրման, դրանց վրա հրդեհների մարումը և ճանապարհային կոմունիկացիաների վերականգնումն իրականացնում են ճանապարհների անցողականության ապահովման խմբերը:

Ճանապարհների երթևեկության վերականգնումից հետո իրականացնում են ճանապարհների մաքրում դեպի աշխատանքային տեղամասեր:Ճանապարհների մաքրման և վերականգնման, հրդեհների մեկուսացմանն ու մարմանը զուգահեռ իրականացվում են կոմունալ-էներգետիկ ցանցերի և կազմակերպությունների վթարների վերացման աշխատանքներ:

Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

ա)ճանապարհների անցողականության ապահովման և հետախուզության խմբերը, բ)հիմնական

ստորաբաժանումներ (հրշեջ-փրկարարական ջոկատները, փրկարարական վաշտերը), գ) բժշկական ստորաբաժանումները, դ) փրկարարական կազմավորումները, ե) հասարակական կարգի պահպանման և վթարատեխնիկական կազմավորումները:

Մանրէաբանական վարակվածության օջախներում հայտարարվում է <Կարանտին>: Այս դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպվում է կարանտինի ռեժիմի պահանջներին խիստ համապատասխան: Նշված դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին ներգրավվում են միայն անհատական պաշտպանության միջոցներով ապահովված ուժերը:

Աղետալի ջրածածկման գոտում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներն իրականացնում են լողամիջոցներով հագեցված, ինչպես նաև ինժեներական տեխնիկա ունեցող կազմավորումները:

Գիշերային ժամերին ապահովվում է փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների աշխատանքային տեղամասերի և երթուղիների լուսավորումը: Զուգահեռ կազմակերպում է պարեկային ծառայություն:

Նյութատեխնիկական, տեխնիկական սպասարկման, սննդի և խմելու ջրի մատակարարման կազմավորումները ծավալվում են աշխատանքային տեղամասերին մոտ և ուժերի ժամանակավոր տեղակայման վայրերում:

Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու նպատակով իրականացվում է մահացածների հուղարկավորման, վարակված, փչացած սննդամթերքի և սատկած գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման միջոցառումներ:

7. Փոխգործողությունների կազմակերպումը

ՀՀ ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության, Մարզի տարածքում տեղակայված ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների, հասարակական փրկարարական ջոկատների և միջազգային ուժերի միջև փոխգործողությունների կազմակերպման նպատակն է՝

1) Բնակչության պաշտպանության միջոցառումների արդյունավետ կազմակերպումը և իրականացումը.

2) Բնակչության պաշտպանության միջոցառումներին ընդգրկված ուժերի և միջոցների հնարավորինս արդյունավետ օգտագործումը.

3) Բնակչության պաշտպանության միջոցառումների կատարման ապահովումը ցանկացած իրադրության պայմաններում:

Փոխգործողությունները Մարզի տարածքում տեղակայված ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) Տեղեկատվության փոխանակումը.
- 2) Ուժերի և միջոցների ընդգրկման կարգը.
- 3) Օդային և վերգետնյա հետախուզության իրականացումը.
- 4) Փրկարարական աշխատանքների իրականացումը:

Փոխգործողությունները Մարզի տարածքում տեղակայված ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) Բնակչության ազդարարումը.
- 2) Տեղեկատվության փոխանակումը.
- 3) Բնակչության հաշվառումը.
- 4) Տարահանման միջոցառումների իրականացումը.
- 5) Ուժերի և միջոցների ընդգրկման կարգը:

Փոխգործողությունները Մարզի տարածքում տեղակայված ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումների հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) բժշկական օգնության ցուցաբերումը
- 2) սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացումը.
- 3) հակահամաճարակային դիտարկման և լաբորատոր հսկողության կազմակերպումը.
- 4) տարահանման բժշկական ապահովումը.
- 5) միջազգային բժշկական ուժերի գործողությունների համակարգումը.

Փոխգործողությունները Մարզի տարածքում տեղակայված ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) պահպանվող օբյեկտների պահպանումը
- 2) ժամանաձ միջազգային ուժերի նկատմամբ հսկողության իրականացումը:

Փոխգործողությունները հասարակական փրկարարական ջոկատների հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) Տեղեկատվության փոխանակումը.
- 2) Ուժերի և միջոցների ընդգրկման կարգը.
- 3) Փրկարարական աշխատանքների իրականացումը:

Փոխգործողությունները միջազգային ուժերի հետ կազմակերպվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- 1) ժամանաձ միջազգային ուժերի կողմից ստեղծված շտաբի հետ տեղեկատվության փոխանակումը.
- 2) Ուժերի և միջոցների ընդգրկման կարգը.
- 3) Փրկարարական աշխատանքների իրականացումը.

Փոխգործողությունների կազմակերպման ուղղությամբ հիմնական միջոցառումներն են՝

- 1) ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ ԿԱ ԱԱԾ, հասարակական փրկարարական ջոկատներ և միջազգային ուժերի ստորաբաժանումների որոշումը, որոնց միջև անհրաժեշտ է կազմակերպել փոխհամագործակցությունը.
- 2) Խնդիրների որոշումը, որոնց ուղղությամբ կազմակերպվում է փոխգործողությունները յուրաքանչյուր համագործակցող մարմինների միջև.
- 3) Համատեղ գործողությունները սկսելու, ավարտելու ժամկետների և հաջորդականության որոշումը.
- 4) Համատեղ գործողությունների համար տրամադրվող ուժերի և միջոցների կազմի որոշումը.
- 5) Փոխգործողության խնդիրների հասցնումը ենթակա ստորաբաժանումներին և տրամադրվող ուժերին.
- 6) Փոխգործողությունների համապատասխան փաստաթղթերի մշակումը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ ԱԱԾ, հասարակական փրկարարական ջոկատների և միջազգային ուժերի ստորաբաժանումների միջև փոխգործողությունն ապահովելու նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ ՕԿՎ ՃԿԿ են գործուղվում ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ ԱԱԾ:

Կապը հասարակական և միջազգային ուժերի հետ կազմակերպվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՕԿՎ ՃԿԿ-ից:

Փոխգործողությունը կազմակերպվում է հետևյալ ուղղություններով՝

- 1) փոխադարձ ազդարարում.
- 2) հետախուզություն և իրավիճակի վերաբերյալ տվյալների փոխանակում.
- 3) բնակչության և մոբիլիզացիոն ռեսուրսների պաշտպանություն.
- 4) բնակչության տարահանում.
- 5) ստեղծված իրավիճակի հետևանքների վերացում.
- 6) կառավարում:

Մարզի տարածքում տեղակայված ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների հետ փոխգործողություններ կազմակերպվում և իրականացվում են համաձայն փոխհամաձայնեցված փոխգործողությունների պլանի:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում փոխգործողության կարգով կարող են ընդգրկվել նաև մարզի ու հարակից տարածքի հասարակական փրկարարական ջոկատների և կամավորական միությունների անձնակազմերը: Առկա ուժերի ու միջոցների անբավարարության դեպքում ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի որոշմամբ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում կարող են ընդգրկվել նաև ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական այլ ստորաբաժանումները:

III. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

8 Ինժեներական ապահովում

Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, ավերված օջախներում և աղետալի ջրածածկման գոտիներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

Մարզի ինժեներական ապահովումն իրականացնում է Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը՝

- 1) նախապատրաստում է պաշտպանական կառույցները պատասպարվողների ընդունման համար.
- 2) ապահովում է ուժերի առաջանցման երթուղիները դեպի օջախներ.
- 3) կազմակերպում է վթարային շենքերի և կառույցների քանդման (վերականգնման) աշխատանքները.
- 4) աջակցում է կոմունալ-էներգետիկ ցանցերում առաջացած վթարների վերացման աշխատանքներին.
- 5) բնակչության պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկների համաձայն կազմակերպում է բնակչության պատասպարումը.
- 6) իրականացնում է արագ կառուցվող ապաստարանների և պարզագույն թաքստոցների շինարարությունը.
- 7) կազմակերպում է փլատակների տակ գտնվող պաշտպանական կառույցների հայտնաբերումը, ելքերի մաքրումը, օդի մատակարարումը և պատասպարվածների դուրս բերումը:

Ինժեներական ապահովման խնդիրները ժամանակին և արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է ունենալ պարբերաբար ստացվող ճշգրիտ տեղեկատվություն՝ ստեղծված օպերատիվ իրավիճակի վերաբերյալ, որը ստացվում է ինժեներական հետախուզության միջոցով:

Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստակաճանության՝ պատասպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում, իսկ հավանական

վտանգավոր կազմակերպություններում, որոնք գտնվում են մշտական պատրաստականության վիճակում, անմիջապես:

9. Բժշկական ապահովում

Բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի կազմակերպությունների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

Մարզի բժշկական ապահովումն իրականացնում է Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը: Մարզի բժշկական ապահովումը իրականացվում է առկա (անկախ կազմակերպարավական ձևից) առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով, ինչպես նաև բժշկական քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ուժերով: Բժշկական ապահովման միջոցառումների իրականացմանը հնարավոր է նաև առողջապահական և այլ ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը:

Մարզում գործում են 5 ստացիոնար և 35 ամբուլատոր- պոլիկլինիկական հիմնարկներ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 250 հատ: Մարզի բուժօգնությունը լրացուցիչ կարող են ծավալել 600 մահճակալ: Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 420, միջին բուժանձնակազմինը՝ 870, կրտսեր բուժանձնակազմինը՝ 207:

Մարզում ստեղծված են թվով 105 բժշկական կազմավորումներ՝ 394 հոգի անձնակազմով, որոնք համարվում են մարզի մշտական պատրաստվածության ուժեր:

Արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում մարզի բնակավայրերից բնակչության մասնակի տարահանման ժամանակ երթուղիներում նախատեսված է մեկ բժշկական բրիգադա:

10. Հասարակական կարգի պահպանություն

Մարզում հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունը:

Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.

2) հասարակական կարգի պահպանությունն ուժեղացվում է ոստիկանության համապատասխան ուժերի և միջոցների հաշվին.

3) հսկիչ-անցագրային կետերում հասարակական կարգի պահպանման աշխատանքները կազմակերպվում են ոստիկանության համակարգի ծառայությունների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ.

4) պահակակետերում և երթուղիներում ծառայությունը կազմակերպվում է շուրջօրյա: Գիշերային ժամերին՝ անձնակազմի անդամների թիվը կրկնապատկվում է:

Ծառայություն կատարող վերակարգի միմյանց և կենտրոնի հետ փոխհամագործակցությունը իրականացվում է ռադիոկապով (ռադիոկապի բացակայության դեպքում լարային կապով).

5) անհրաժեշտության դեպքում հասարակական կարգի պահպանման պահակակետերում, երթուղիներում և զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում իրականացվող աշխատանքներում ներգրավվում են համայնքների հասարակական կարգի պահպանման կազմավորումները:

Կազմակերպության պահպանության ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) կազմակերպության պահպանությունն իրականացնում են Կոտայքի մարզում տեղակայված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումները.

2) ոստիկանության ուժերով կազմակերպությունների պահպանությունն ուժեղացվում է հետևյալ կարգով՝

ա. մշակվում են անցագրային ռեժիմի խստացված տարբերակներ (բացառելով միանգամյա և ժամանակավոր անցագրերի տրամադրումը, արգելելով աշխատողների աննպատակ շարժն կազմակերպությունների տարածքում և այլն).

բ. կարևորագույն նշանակության արտադրամասերում, պահեստներում և պահատեղերում ստուգվում են պահպանության և հակահրդեհային ահազանգման սարքավորումների առկայությունն ու աշխատունակությունը, անհրաժեշտության դեպքում տեղադրվում են լրացուցիչ սարքավորումներ.

գ. վերահսկվում են կազմակերպությունը շրջափակող պարիսպը և իրականացվում քանդված մասերի վերանորոգման աշխատանքներ.

11. Տրանսպորտային ապահովում

Տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

Մարզի տրանսպորտային ապահովման իրականացման ապահովում է Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունը՝

1) կազմակերպում է Մարզի տարածքի ճանապարհների անցանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

2) կազմակերպում է Մարզի տարածքի ավտոճանապարհներում ստեղծված իրավիճակի հետախուզումը, վերլուծումը, գնահատումը և անհրաժեշտ վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

3) հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.

բ. փրկարարական ուժերի տեղափոխման համար.

գ. տուժածների փոխադրման համար.

դ. տրանսպորտային միջոցները չբավարարող քաղաքացիական պաշտպանության ծառայություններին և կազմակերպություններին՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման տրանսպորտային ապահովման համար:

Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են Մարզի տարածքում գործող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինական և վերանորոգման ու այլ կազմակերպությունների, քաղաքների և գյուղական համայնքների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները:

12. Հակահրդեհային ապահովում

Հակահրդեհային ապահովումը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

Մարզի հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է ՀՀ ԱԻՆ ՓՕ Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը:

Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

Հատուկ, կարևորագույն նշանակության կազմակերպություններում հսկվում է հրշեջ կազմավորումների կողմից ուժեղացված ծառայության կազմակերպումը, նախապատրաստվում են հակահրդեհային ջրամատակարարման պահեստային աղբյուրները (փակ ջրավազաններ, հրշեջ հիդրանտներ, պիրսեր և այլն), ճշտվում են ջրամատակարարման խնդիրները:

Մարզի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ-փրկարարական ջոկատների ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի հրդեհաշիջմանը անհրաժեշտ է ընդգրկել նաև հասարակական ուժեր և բնակչությանը:

Երթուղիներում հրշեջ-փրկարարական ջոկատները, բացի հրդեհաշիջման աշխատանքներից, մասնակցում են նաև.

- 1) փլուզված տարածքներից մարդկանց փրկման աշխատանքներին.
- 2) ջրամբարների պատվարների փլուզումից առաջացած ջրածածկման գոտուց մարդկանց դուրս բերմանը.
- 3) մարզի տարածքում գտնվող անտառների հրդեհաշիջմանը.
- 4) կամուրջների փլուզման ժամանակ գետանցումների իրականացման և փրկման աշխատանքներին.
- 5) փլուզված պաշտպանական կառույցներից մարդկանց դուրս բերմանը և առաջին բուժօգնության ցուցաբերմանը՝ օգտագործելով փոքր մեխանիզացիա և ինժեներական տեխնիկա, համագործակցելով ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայությունների հետ.
- 6) զանգվածային կուտակման վայրերում և ժամանակավոր կացարաններում մարտական հաշվարկի հերթապահությանը.
- 7) քիմիական վտանգավոր կազմակերպություններում վթարափրկարարական աշխատանքներին:

Յուրաքանչյուր հերթապահ ջոկ, որը մնում է տեղում, մասնակցում է առանձին հրդեհների մարման աշխատանքներին: Մեծ հրդեհների դեպքում կարող են օգտագործվել այլ ուժեր:

13. Ճառագայթային, քիմիական, կենսաբանական (մանրէաբանական) պաշտպանության միջոցառումներ

Ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը իր մեջ ընդգրկում է Ճառագայթային, քիմիական և կենսաբանական հետախուզությունը, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների օգտագործումը, դոզաչափական և քիմիական հսկողությունը, Ճառագայթային պաշտպանության ռեժիմների պահպանումը, նյութական միջոցների հատուկ մշակումը, տարածքների, ճանապարհների և շինությունների ապագագացումը և ապակտիվացումը, փրկարար ուժերի ապահովումը հակաճառագայթային և հակաքիմիական միջոցներով:

Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Ճառագայթային պաշտպանության կազմակերպման միջոցառումներն են՝

- 1) բնակչության ազդարարումը.
- 2) բնակչության պասպարումը.
- 3) բնակչության, ընտանի կենդանիների, նյութական արժեքների տարահանումը.
- 4) վահանաձև գեղձի արգելափակման իրականացումը.
- 5) ապաստանի վացման (տեղանք, շենքեր և շինություններ, տեխնիկա, նյութական արժեքներ և այլն) աշխատանքների կատարումը.

6) Ճառագայթակալի մշտական հսկողության սահմանումը, դիտարկման իրականացումը.

7) մարդկանց և ընտանի կենդանիների սանիտարական մշակումը:

Վթարաքիմիական վտանգավոր նյութի առաջնային և երկրորդական գոլորշային ամպերի վերացման և վարակազերծման միջոցառումներն են՝

1) վթարաքիմիական վտանգավոր նյութի առաջնային և երկրորդական գոլորշային ամպերի շարժման հակառակ ուղղությամբ ջրային վարագույրի տեղադրումը.

2) թափված վթարաքիմիական վտանգավոր նյութի չեզոքացումը թմբապատման միջոցով.

3) վթարաքիմիական վտանգավոր նյութի հեղուկ ֆազի արտահոսքի տեղայնացումը կլանող փուտերի միջոցով.

4) հոսուն սորբենտներով վթարաքիմիական վտանգավոր նյութի արտահոսքի ծածակումը.

5) արտահոսած վթարաքիմիական վտանգավոր նյութի տեղայնացումը փրփուրի շերտով, պոլիմերային թաղանթների և լողացող էկրանների միջոցով.

6) վթարաքիմիական վտանգավոր նյութի արտահոսքի տեղայնացումը չեզոքացնող լուծույթներով և ջրում լուծելով.

7) չեզոքացնող նյութերով և ջրով արտահոսքի վարակազերծումը (չեզոքացումը).

8) վթարաքիմիական վտանգավոր նյութի արտահոսքի վարակազերծումը (չեզոքացումը) պինդ հոսուն չեզոքացնող նյութերի օգտագործմամբ.

9) վթարաքիմիական վտանգավոր նյութի արտահոսքի տեղայնացումը (վարակազերծումը) հեղուկ ֆազի պնդեցման միջոցով:

Ստորաբաժանումների հատուկ մշակման և անձնակազմի սանիտարական մշակման իրականացման համար ծավալվում է հատուկ մշակման շրջան, որը որպես կանոն ծավալվում է չվարակված տարածքում, ստորաբաժանումների վարակման գոտուց դուրս գալու երթուղիների վրա:

Հատուկ մշակման շրջանն իր մեջ ընդգրկում է՝

1) մշակման ենթակա ստորաբաժանումների սպասելու շրջան.

2) հատուկ մշակման կետ.

3) սանիտարական մշակման կետ.

4) տեխնիկայի կայանատեղ (բնական գազազերծման համար), որոնք չեն ենթարկվել լիարժեք գազազերծման:

Հատուկ մշակման կետը և սպասելու շրջանը նախատեսված են ստորաբաժանումներին հատուկ մշակման նախապատրաստման ենթարկելու և հերթադրման համար: Կախված իրավիճակից, սպասելու շրջանը հատուկ մշակման կետից պետք է գտնվի

1-5կմ հեռավորության վրա:

Հատուկ մշակման կետը տարածքի հատված է, որի վրա ծավալվում են վթարների հետևանքների վերացման ստորաբաժանումները, տեխնիկայի, սարքավորումների և հանդերձանքի գազազերծման իրականացման համար:

Հատուկ մշակման կետում ծավալվում են՝

1) հսկիչ-տեղաբաշխիչ կետ.

2) տեխնիկայի մշակման հարթակ.

3) սարքերի և գործիքների հատուկ մշակման հարթակ (անհրաժեշտության դեպքում).

4) անհատական պաշտպանության միջոցների և հանդերձանքի գազազերծման հարթակ.

5) հրամանատարադիտարկման կետ:

Հսկիչ-տեղաբաշխիչ կետը տեղաբաշխվում է հատուկ մշակման հարթակից 0.5-1կմ հեռավորության վրա տեխնիկայի և անձնակազմի վարակվածության որոշման համար:

Տեխնիկայի մշակման հարթակը ծավալվում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանության կամ հրշեջ ստորաբաժանումների կողմից:

Սարքերի և գործիքների հատուկ մշակման հարթակը (անհրաժեշտության դեպքում), ծավալվում է ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանության ստորաբաժանումների կողմից:

Անհատական պաշտպանության միջոցների և հանդերձանքի ապակտիվացման հարթակը ծավալվում է հատուկ մշակման ստորաբաժանումների կողմից:

Մանիտարական մշակման կետերը ծավալվում են հատուկ մշակման ստորաբաժանումների կողմից, որոնք ունեն ցնցուղային-գազազերծող համակարգ:

Գազազերծումը (սանիտարական մշակումը) կարող է լինել մասնակի կամ լրիվ: Մասնակի ապակտիվացում իրականացվում է ժամանակի սղության կամ հնարավորությունների սահմանափակ լինելու դեպքում: Ապակտիվացվում են տեխնիկայի այն հատվածները, որոնք կարող են շփվել մարդկանց մաշկի հետ:

Գազազերծման (սանիտարական մշակման) աշխատանքներն իրականացվում են այնպես, որ չխոչընդոտեն ստորաբաժանումների կողմից խնդիրների կատարման ընթացքին:

Ուժեղ ներգործող թունավոր նյութերից բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պաշտպանությունը կազմակերպվում է համաձայն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում գործելու պլաններով նախատեսված կարգի:

Ուժեղ ներգործող թունավոր նյութերից բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների ազդարարում:

2) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու վերաբերյալ լրատվամիջոցներով և բարձրախոս սարքերով բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների օպերատիվ տեղեկացում:

3) անհատական պաշտպանության միջոցներով բաշխման իրականացում:

4) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պատասպարում ու տարահանման իրականացում:

Անհատական պաշտպանության միջոցների բաշխումն իրականացվում է տվյալ ուժեղ ներգործող թունավոր նյութերի համար նախատեսված ֆիլտրող բալոնների տրամադրմամբ հակագազերի բաշխումն իրականացվում է տարիքային խմբերի համար նախատեսված չափերին համապատասխան: Մինչև 1.5 տարեկան երեխաները ապահովվում են մանկական խցիկներով:

Անհատական պաշտպանության միջոցներով գտնվելու ժամանակահատվածը պայմանավորվում է անհատական պաշտպանության միջոցի տեսակից, օդի ջերմաստիճանից և ֆիզիկական ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև գտող տուփի պաշտպանիչ ժամանակահատվածից:

14. Տեղեկատվական ու բնակչության իրազեկման ապահովում

Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

ա) Հանրային իրազեկմանն ուղղված գործընթացներն ապահովում է Միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնը (այսուհետ՝ ՄՄԼԿ), որն աղետի դեպքում կազմակերպվող, շահագրգիռ տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խումբ է: ՄՄԼԿ-ն գործում է որպես միջնորդ իշխանությունների և հասարակության միջև, հետևում է իրադարձությունների ընթացքին, անընդհատ կապի մեջ է ՃԿԿ-ի և աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված մարմինների հետ:

- բ) Արտակարգ իրավիճակների որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է «Բիլայն», «ՎիվաՄեյլ ՄՏՄ» և «Օրանժ» բջջային կապի օպերատորներին (և մարզային կապի հանգույցներին)՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով: Անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:
- գ) ՄՄԼԿ-ն կազմակերպում է աղետի ընթացքը լուսաբանող մամուլի ասուլիս՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև հարցազրույցներ լիազոր մարմնի մամուլ խոսնակի, լիազոր մարմնի պաշտոնյաների հետ: Համակարգում է ՁԼՄ-ների աշխատանքը, վերջիններիս ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ, պատասխանում հասարակության հարցերին, ամփոփում և բնակչությանը տեղեկատվություն ներկայացնում կառավարման մարմինների գնահատականների, որոշումների ու ձեռնարկվող քայլերի մասին, հետևում դրսի աղբյուրներից ներթափանցող տեղեկատվությանը, կազմակերպում է ՁԼՄ-ների ներկայացուցիչների տեղափոխումը, համակարգում աղետի գոտում ճեպագրույցների կազմակերպման աշխատանքները:
- դ) ՄՄԼԿ-ն իրականացնում է շուրջօրյա օպերատիվ աշխատանք՝ համակարգելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից ստացված օպերատիվ տեղեկատվության ճշգրտման, մշակման, ամփոփման ու լրատվամիջոցներին պարբերաբար տրամադրելու գործընթացը:

15. Հիդրոոդերևութաբանական ապահովում

Հիդրոոդերևութաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:

Մարզի հիդրոոդերևութաբանական տվյալները ստացվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի Հանրապետության հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան ստորաբաժանումից:

Հիդրոոդերևութաբանական դիտարկումները սովորական պայմաններում իրականացվում են օրական 8 անգամ (3 ժամը մեկ), ռադիացիոն ֆոնի որոշումը՝ օրական մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հաճախականացված ռեժիմով:

16. Նյութատեխնիկական ապահովում

Նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

Մարզի սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության բազայի վրա ստեղծված մարզային առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը:

Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, քաղաքացիական պաշտպանության միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

Ուժերի նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է տեխնիկայով, վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով, տեխնիկական միջոցներով՝ բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպելու, ինչպես նաև կազմակերպությունների և նյութական արժեքների պահպանությունը ապահովելու, փրկարարական և այլ աշխատանքներ կատարելու նպատակով:

Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում Մարզի կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստից հատկացված միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՄՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Փ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պ Լ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Ք.ԱԲՈՎՅԱՆ
2012թ.